ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ԱՆԳՀԾ 2016-2

ք. Երևան **«15» Հունվարի 2016թ.**

ՀՀ արդարադատության նախարարությունը, ի դեմս ՀՀ արդարադատության աշխատակազմի ղեկավար **Արմեն Գևորգյանի**, այսուհետ՝ «Դրամաշնորհ տրամադրող» մի կողմից, և «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ը, ի դեմս ռեկտոր **Ռուբեն Մելիքյանի**, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Դրամաշնորհ ստացող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրի առարկան է՝

Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով՝ «Վերապատրաստման ծառայություններ» ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցների տրամադրումը «Դրամաշնորհ ստացողին»՝ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի կողմից հաստատված ծրագրերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիայի կողմից դատավորների, դատախազների, Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած և դատավորների թեկնածությունների ցուցակում գտնվող անձանց, դատական ծառայողների, դատախազության աշխատակազմում պետական ծառայողների և դատական կարգադրիչների վերապատրաստում, դատավորների, դատախազների և դատական կարգադրիչների հատուկ ուսուցում՝ հատուկ միջոցների և հրազենի գործադրման ունակություններին ուսուցանում, ուսումնամեթոդական նյութերի մշակում իրականացնելու նպատակով:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Դրամաշնորհ տրամադրողն իրավունք ունի՝

2.1.1. Պահանջելու Դրամաշնորհ ստացողից ներկայացնել ամսեկան կտրվածքով հաշվետվություն՝ Դրամաշնորհ ստացողի կողմից իրականացված գործունեության վերաբերյալ,

2.1.2. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ստուգել Դրամաշնորհ ստացողի կողմից ներկայացված հաշվետվությունները, գումարների նպատակային օգտագործումը և թերություններ հայտնաբերելիս այդ մասին տեղյակ պահել Դրամաշնորհ ստացողին:

2.2. Դրամաշնորհ տրամադրողը պարտավոր է՝

2.2.1. Սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում և կարգով Դրամաշնորհ ստացողի բանկային հաշվին փոխանցել նախատեսված գումարները:

2.3. Դրամաշնորհ ստացողն իրավունք ունի՝

2.3.1. Դրամաշնորհ տրամադրողից պահանջել փոխանցելու Արդարադատության ակադեմիային փոխանցման ենթակա գումարները:

2.4. Դրամաշնորհ ստացողը պարտավոր է՝

2.4.1. Հաշվետվությունները ներկայացնել յուրաքանչյուր ամսվա վերաբերյալ, մինչև հաջորդ ամսվա 10-ը ներառյալ, իսկ եթե այդ օրը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ոչ աշխատանքային օր է, ապա մինչև այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը ներառյալ:

2.4.2. Արդարադատության ակադեմիային հատկացվող ֆինանսական միջոցները չծախսել այլ նպատակով,

2.4.3. Ապահովել Դրամաշնորհ տրամադրողի վերահսկողությունը հաշվետվության մասով:

3. Դրամաշնորհի տրամադրելու և ծախսելու կարգը

3.1. Դրամաշնորհը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով «Վերապատրաստման ծառայություններ» ծրագրով նախատեսված միջոցներից: Գումարի չափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով: Գումարները հատկացվում են կատարողի բանկային հաշվին փոխանցելու միջոցով և այն կարող է փոխվել յուրաքանչյուր տարվա համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով այդ նպատակի համար նախատեսված միջոցների չափից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լրացուցիչ հատկացման միջոցների չափով:

3.2. Պատվիրատուի կողմից փոխհատուցումը կատարվում է ամսեկան կտրվածքով՝ որը փոխանցվում է Կատարողի հաշվարկային հաշվին,մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը, իսկ եթե այդ օրը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ոչ աշխատանքային օր է, ապա մինչև այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը ներառյալ:: Յուրաքանչյուր ամիս գումարը Կատարողի հաշվին է փոխանցվում նախորդ ամսվա փոխանցված գումարի վերաբերյալ Պատվիրատուին հաշվետվություն ներկայացնելուց հետո:

4. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

5. Եզրաչափիչ դրույթներ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև սույն պայմանագրի 1-ին կետում նշված նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական միջոցների դադարեցումը:

5.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

5.3. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Դրամաշնորհի տրամադրող	**Դրամաշնորհի ստացող**
ՀՀ արդարադատության նախարարություն Ք.Երևան, Հալաբյան 41/ա կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն 900011474500	«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ Ք. Երևան Փիրումյաններ 9 Հ/Հ 163468013046 ՀԷԲ Աջափնյակ մաս. ՀՎՀՀ 00129631
---------- (ստորագրություն) Կ.Տ	---------- (ստորագրություն) Կ.Տ